ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 մայիսի 2023 թվականի N 173 -Ա

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի 04.05.2023թ. զեկուցագիրը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ 200000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով գումար հատկացնել Հայրենական մեծ պատերազմի Սյունիքի մարզի մասնակիցներին՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Սյուզաննա Գևորգյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:
3. Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Սյուզաննա Գևորգյանին՝ 5-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն գումարի հատկացման վերաբերյալ:

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2023թ. մայիսի 4
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2023 թվականի մայիսի 4-ի N 173 - Ա որոշման

Ցանկ
Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ գումար ստացող
Հայրենական մեծ պատերազմի Սյունիքի մարզի մասնակիցների

N	ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ	Համայնք, բնակավայր	ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ դրամ)
1.	Արշալույս Թադևոսյան	Քաջարան	100000 (հարյուր հազար)
2.	Հակոբ Վարդանյան	Սիսիան	100000 (հարյուր հազար)

04.05.2023

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

Գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հաստատեմ
100000 դրամ

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. Ղուկասյանին

մարզպետի աշխատակազմի առողջապահության և

սոցիալական ապահովության վարչության,

սոցիալական ապահովության բաժնի պետ

Արամ Շահնազարյանից

Զեկուցագիր

Հարգելի պարոն Ղուկասյան

Խնդրում եմ Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներ՝ Արշալույս Թադևոսյանին և Հակոբ Վարդանյանին Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ ցուցաբերել աջակցություն՝ յուրաքանչյուրին 100.000 (հարյուր հազար) դրամի չափով:

Սոցիալական ապահովության բաժնի պետ՝ **Ա. Շահնազարյան**

04.05.2023թ.

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔԻ ԹԻՎ Ք/709
«09» 05 2023 թ.